

Համաշ բարօյափառական առանձներն են ու պատճենագիրը, Աէջ ընդ մէջ յօպւածների հետ վեսեզուած են զրաւոր վարժիւններ, որնց միջոցով աշակերտը ծանօթանում է միքանի ուղղագրական ու քերականական կանոնների հետ:

Մարդ ակամայ ձեռներն է վար զցում, երբ տեսնում է այս դասագրքի մէջ 10—15 ուղղագրութիւն միամին զործածուած: Եւ այսպիսի մի ձեռնարկի ոգնութեամբ նոր ակրունզը պէտք է հայերէն սովորչի:

Թարգմանութիւնները շատ թերի ևն կատարուած, օրինակ՝ «Գիւղի զրագէաց»: մարդ դժուարութիւնով է կարողանուածել սրա խիսկականը (Գրառուն, Յօվերը-ի դաստիարքից), այնքան անճռունի է թարգմանութիւնը: Բերճնը մի նմուշ ու Ա-ի զիսական բացասարութիւնների:

«Օդ և համբ».—«Վեր առնենք մի թղթէ պարկ, փշենք, ուղանենք նրան, իսկ յետոյ բռունցրով խփենք, պարկն իսկոյն կը ձայթի և կը տրաքուի, զա օդն էր».

«Քամին ու արեւը».—«Ճանապարհորդը արեւից տաքացած, հանում է վերաբերուն, ձալում և կապում «թամրին»:—«Ինչ թամր է զա: Գուցէ մարդը ձիու վրայ էր նստած, բայց ձիու մասին ոչ մի խօսք չի եղած»:

Դասագիրքը բովանդակութեան կողմից աջողուածներից չէ: Այդպիսով, «Մայրենի լեզու»-ների մէջ, ըստ իս, այսուամնայնիւ, Ղ. Աղայեանցինն է մնում լաւագոյնը:

ՀԱՅԻ

ՅԵ) Vital Guinet: „LA TURQUIE D'ASIE, Տօմ I—892 թ. II—884. III—780. IV—716^o. Վ. Քիւնէ. „Ասիսկան Թիւրքիան, 4 հատոր. 3272 երկու:

Դժուար է ցոյց տալ մի աշխատութիւն, որը կատարելապէս պատկերացնէր Թիւրքիայի անտեսական-սօցիալական վիճակը: Եղածները կամ ճանապարհորդական թռուցիկ ապաւոթիւններ են պարունակում իրանց մէջ, կամ զուտ մասնագիտական, հնագիտական, բռուարանական, երկրարանական և այլ ուսումնասիրութիւններ: Անս այդ պահանը լրացնել է փորձում ու, Քիյնէ իր այս հոկայական աշխատութեամբ, որ բոլոր կացած է և հատորներից—երկարական զիրք իւրաքանչիւր հա-

տորում՝ զարդարուած բազմաթիւ քարտէզներով ու վիճակա-
գրական տախտակներով:

Հեղինակը նախօրօք ուսումնասիրել է Թիւրքիայի վե-
րաբերեալ ամբողջ գրականութիւնը, 12 երկար ու ձիգ տարի-
ներ ճանապարհորդել է այդ ընդարձակ երկրի զանազան գա-
ւառներում, հարց ու փորձ է արել պաշտօնական ու ոչ պաշ-
տօնական ձեռնհաս մարդկանց և ապա նոր հրատարակութեան
յանձնել իր աշխատասիրութիւնը:

Նա խօսում է Սսիական Թիւրքիայի բոլոր վիլայէթների
մասին առանձին-առանձին, յետոյ իւրաքանչիւր վիլայէթի կա-
զաների մասին և գրեթէ միշտ չոշափում է հետեւեալ հարցերը.
1) Վարչական բաժանումն—տարածութիւն և սահմաններ. 2) Ազգաբնակութիւն ըստ կրօնի և ազդութեան. 3) Ժողովրդական
բարքեր ու սովորութիւններ. 4) Դարպաներ. 5) Վաճառականու-
թիւն. 6) Արդիւնաբերութիւն. 7) Ճանապարհների հաղորդակ-
ցութիւն. 8) Գետեր, լեռներ, հանքեր և անտառներ. 9) Հար-
կահանութիւն. 10) Պետական ել և մուտք:

Հէնց միայն վերնագրի այդպիսի ստորաբաժանումը բաւա-
կան է, որպէս զի ընթերցողին ցոյց տայ, թէ որքան հետա-
քրքայարժ նիւթեր է պարունակում այդ գիրքը, Բայց ասել,
թէ նա միանգամայն հեռու է սիակներից, թէ բառիս բուն նը-
շանակութեամբ լիակատար ուսումնասիրութիւն է—դա դժուար
կը լինէր: Շատ տեղ հեղինակը ընկնում է մանրամասնութիւն-
ների մէջ, հաղորդում է ծիշտ ու նորագոյն տեղեկութիւններ,
իսկ շատ տեղ էլ բաւականանում է միմիայն թոռոցիկ տեսու-
թեամբ: Սակայն խստապահանջ լինել չէ կարելի, որովհետեւ
Թիւրքիան այն երկիրն է, որտեղ չը կայ կանոնաւոր վիճակա-
գրութիւն, չը կայ անհրաժեշտ տեղեկութիւնների մի մաքուր
աղբիւր: Պարզ է ուրեմն, որ այդպիսի պայմաններում խօսք
անդամ չի կարող լինել լիակատարութեան ու անսխալակա-
նութեան մասին Կարելի է ասել միայն այսքանը, որ պ. Քիյնէ
տուել է այն, ինչ որ կարողացել է, ինչ որ հսարաւոր է եղել:

Գերմանացի հեղինակներից Նաումանի «Vom Goldenen
Horn zu dem Quellen des Euphrat» և Կարլ Կաննենբերգի
«Kleinasiens Naturschätze» խորագրով գրքերը չունեն այնպիսի
ընդարձակութիւն ու նիւթերի բազմակողմանսիւթիւն, ինչպէս
այս Փրանսիացի հեղինակի աշխատութիւնը:

Հեղինակը միշտ անշատ կերպով ընդգծում է իրերի գը-
րութիւնը, առաջ է բերում փաստերն ու վիճակագրական տե-
ղեկութիւնները, եղբակացութիւնը թողնելով ընթերցողներին:
Բաւական է ուշագրութեամբ կարգալ այդ փաստերը, համեմա-

աել ուրիշ երկրների հետ, որպէս զի մարդ ականակից բայց կանչէ.

— Արդյօսի ընդարձակ ու բարերեր երկիր է Ասիան թիւրքիան, բայց մինչևս ժամանակ որբան խռէ ու յառաջնաց է նա կուլտուրապէս, որբան ձնչուած ու հարստանորուած է նա բանակալ կառավարութեան կողմէց:

Այդ իրադութեան պերճախւս ապացոյցներից մէկն էլ կազմում է ազգարնակութեան քանակութիւնը կար ժամանակ, երբ Փոքր Ասիան մի շարք ժաղկած պետութիւնների որբան էր և ունէր մնացանակ ազգարնակութիւն, իսկ այժմ չնորդի. վարչական կորստարեր սիստեմի և տիրոզ սոցիալական պայմանների, ազգարնակութեան թիւը հազիր համաւամ է 15,553,186-ի, այսինքն իւրաքանչիւր քառակուսի կիլոմետրի վրայ մաս 12 հոգի. Այդ թուր ողորմելիութիւնն հասկանալու համար բաւական է աչքի առաջ ունեւալ, որ իւրաքանչիւր քառակուսի կիլոմետրի վրայ ապրում են *):

Թիւրքիայում 12 հոգի

Ֆրանսիայում 71 >

Գերմանիայում 97 >

Անգլիայում 125 >

Բելգիայում 218 և այլն

Գ. Քիյնէ տալիս է մանրամասն անդնեռութիւններ Ասիան թիւրքիայի ազգարնակութեան մասին: Այդակ մեզ համար հետաքրքիր կարող են լինել հայերին վերաբերեալ թուերը, Ուրբան հայ կայ թիւրքիայում: — Խնչպէս յայտնի է այդ հարցի մասին շատ է խօսուել ու զրուել 70-ական թուականներից մինչեւ օրերս Սահայն արտայայտուած կարծիքներն այնքան հակասական են, այնքան տարբերուած են միմնանցից, որ շատ դժուար է նրանցից մի որոշ եղբակացութիւն դուրս բերելու, Այսպէս, օրինակ, այդ թիւը համաւամ է.

Էսա «Ազգ. Հիւանդանոցի 1902թ. Օրացոյցի» 2,300,000-ի.

| | | | | |
|--------------------------------|---|---|---|-------------|
| > Վաների ¹⁾ | . | . | . | 1,800,000 > |
| > պրօֆ. Վամբարիի ²⁾ | . | . | . | 1,131,125 > |
| > Ա. Բարխուդարեանի | . | . | . | 3,500,000 > |
| > գեներալ Զելենովի | . | . | . | 1,219,750 > |
| > պրօֆ. Զուլանի ³⁾ | . | . | . | 1,226,750 > |

*) Prof. Hickmann: „Universal Taschen-Atlas“.

¹⁾ Dis Bevölkerung der Erde 1891.

²⁾ „Deutsche Rundschau“ 1896- Februar.

³⁾ „Ausland“ 1891. № 20

⁴⁾ „Записки Кавказ. отдѣл. Импер. рус. Географ. Общества“ IIIVХ, 1895.

⁵⁾ „Petermanns Mitteilungen“ 1896.

իսկ «La Turquis d'Asie» գրքի հեղինակը չի տալիս հայերի ընդհանուր թիւը, այլ առաջ և բերում իւրաքանչիւր վիլայէթի ու սանջաղի ազգաբնակութեան ցուցակը առանձին՝ Դրանց միջից զտելով հայերի թիւը, կը ստանաք՝ Փոքր Ասիայում 939,000, իսկ ամբողջ Թիւրքիայում՝ 1,144,000. ուրեմն գարձեալ մի տարբեր կարծիք, իսկ թէ այդքան բազմազան կարծիքներից ո՞րն է աւելի ճշշտը, ո՞րն է աւելի մօտ իրականութեանը—դա մի ծանրակշիռ հարց է, որին գուցէ, վերագառնանք առանձին յօդուածով։

Ե. ԹՌԳՋԵԱՆ

Յ7) Ս. ԶԻԼԻՆԿԱՐԵՎԱՆ և Տ. ՌԱՇՄԱՃԵԱՆ, Էլեկտրականութիւն, (Ժողովրական բնագիտական գրադարան N 6), 1902 թ. Ալէքսանդրովու, գին է 15 կոպ.։

Այդ պարոնների կաղմած միւս «բնագիտական» զրոյցների հետ անծանօթ ենք, սակայն, եթէ նրանք էլ գրուած են այս «էլէքտրականութեան» նման թէ ոճով և թէ հմտութեան կողմից—առանձին ուրախանալու առիթ չունի մեր ժողովուրդը։ Գիտութիւնը ժողովրդականացնելու իղձը շատ լաւ բան է, սակայն միայն իղձը բաւական չէ մի գործ աջող կերպով զլուխ բերելու համար։ Եւրոպայում ճիշտ գիտութիւնները ժողովրդականացները, որոնք բացի մասնագիտական հմտութիւնը՝ ունեն նաև կենդանի ու հետաքրքրական ոճով պատմելու չնորհք. մինչդեռ մեր այդ երկու պարոնները նախ բաւական մակերեւոյթային, անկատար տեղեկութիւններ ունեն այն երեւոյթների մասին, որ ձգտում են ժողովրդականացնել և, երկրորդ՝ բոլորովին անշնորհք են իրանց մտքերը ճիշտ գիտութիւններին վայել կերպով արտայայտելու։ Երկար կանգ առնել այդ գրքոյիկ վրայ մտադիր չենք. բաւական է հէնց այն, որ այդ պարոնները «ներկայ գիտութիւնից» խօսելով, սկի տեղեակ չեն այդ գիտութիւնից։ Խնդներդ դատէք. «տղաներից մէկը» հարցնում է։

— Բայց ի՞նչ ուժ է այդ էլէքտրականութիւնը։

Դրանք պատասխանում են.

— Ներկայ գիտութիւնը հաստատ կերպով չի կարող այդ բանը որոշել, այլ ասում է. այստեղ էլ մարդիկ գործ ունեն մի ծածուկ նիմիթի կամ ֆլուղիումի հետ։

Մի այլ տեղ (երես 14) արւում է այսպիսի բացատրութիւն «Փլուղիումի» մասին։

«Գիտնականներն ընդունում են, որ աշխարհում գտնուած